Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
նոյեմբերի 24-ի N 1204 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԱԳԱՐԱԿ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ագարակ» պատմամշակութային արգելոցը (այսուհետ՝ արգելոց) ստեղծվում է՝ պայմանավորված «Ագարակ» բնակատեղի-հնավայրի պատմամշակութային բարձրարժեք հուշարձանների հատուկ և ամբողջական ուսումնասիրման, պահպանության պայմանակարգի (ռեժիմի) սահմանման անհրաժեշտությամբ, ինչը հնարավորինս անաղարտ կպահպանի հնավայրը, կապահովի նրա հետազոտման և գիտաճանաչողական ու զբոսաշրջության նպատակներով օգտագործումը: Արգելոցը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ագարակի և Ոսկեհատի գյուղական համայնքների վարչական տարածքներում:

2. Արգելոցի ստեղծման նպատակներն են՝

1) հուշարձանի բնապատմական միջավայրի պատմամշակութային հողերի և դրանց հարող տեղանքապատկերների (լանդշաֆտներ) հնարավորինս անաղարտ պահպանումը.

2) հուշարձանի տարածքում հայտնաբերված և այդ հուշարձանին վերաբերող մշակութային արժեքների պահպանումը, ուսումնասիրումը, ինչպես նաև նպատակային օգտագործումը.

3) գիտաճանաչողական զբոսաշրջության զարգացման նախադրյալների ստեղծումը և բնակչության՝ մշակութային ժառանգության նկատմամբ հարգանքի ձևավորումը:

3. Արգելոցի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Ագարակ» պատմամշակութային արգելոց.

2) հայերեն կրճատ՝ «Ագարակ» արգելոց.

3) ռուսերեն լրիվ՝ Историко-культурный заповедник «Агарак».

4) ռուսերեն կրճատ՝ Заповедник «Агарак».

5) անգլերեն լրիվ՝ Historical and cultural preservaition of « Agarak».

6) անգլերեն կրճատ՝ Preservaition of «Agarak»:

II. ԱՐԳԵԼՈՑԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ (ՌԵԺԻՄԸ)

4. Արգելոցի տարածքում արգելվում են՝

1) տնտեսական և բնակելի օբյեկտների շինարարությունն ու շահագործումը, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և հաղորդակցության այլ ուղիների շինարարությունը՝ բացառությամբ արգելոցի գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների շինարարության.

2) մեքենայացված տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը թույլատրված ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.

3) երկրաբանահետախուզական աշխատանքները, որոնք ուղեկցվում են փորձնական հանույթներով, մակաբացումներով, պայթեցումներով և բնապատմական միջավայրը խախտող այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ.

4) օգտակար հանածոների մշակումը, հանքաշերտերի, հանքաելուստների և լեռնատեսակների ելքերի շահագործումը.

5) բույսերի, ծաղիկների ու սերմերի մթերումը, անասունների արածեցումը, բուսածածկի այլ խախտումներ.

6) թունաքիմիկատների օգտագործումը.

7) այլ ցանկացած գործունեություն, որը խախտում, աղճատում, նսեմացնում է արգելոցի բնապատմական համակարգերը, հնագիտական հուշարձանները կամ սպառնում է գիտական և (կամ) մշակութային արժեքի պահպանությանը:

5. Մուտքն արգելոցի տարածք թույլատրվում է՝

1) գիտահետազոտական աշխատանքների կատարման, ինչպես նաև արգելոցի գործունեության հետ կապված այցելությունների,

2) կանոնակարգված, գիտաճանաչողական զբոսաշրջության համար:

III. ԱՐԳԵԼՈՑԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6. Արգելոցը պահպանում, ուսումնասիրում, օգտագործում և հանրահռչակում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) «Ազարակ» պատմամշակութային արգելոց» մասնաճյուղը (այսուհետ՝ մասնաճյուղ):

7. Արգելոցի տարածքում գտնվող հուշարձաններին և դրանց բնապատմական միջավայրին առնչվող աշխատանքների կատարումը համաձայնեցվում է պետական լիազոր մարմնի հետ:

IV. ԱՐԳԵԼՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

8. Արգելոցի գործունեության առարկան և նպատակներն են հուշարձանի, հուշարձանի պատմական և բնապատմական միջավայրի, պատմամշակութային հողերի, տեղանքապատ-կերների և հուշարձանին վերաբերող այլ մշակութային արժեքների պահպանությունը, ուսումնասիրումը, հանրահռչակումը և օգտագործումը:

9. Իր գործունեության առարկային և նպատակին համապատասխան՝ արգելոցը՝

1) իրականացնում է արգելոցի և նրա պահպանական գոտու տարածքում գտնվող հուշարձանների, հուշարձանի տարածքից հայտնաբերված և այդ հուշարձանին վերաբերող

այլ մշակութային արժեքների, պետական սեփականություն հանդիսացող պատմամշակութային հողերի պահպանությունը.

2) վերահսկում է արգելոցի հուշարձանների ամրակայման, վերականգնման, նորոգման, հարմարեցման և պեղման աշխատանքների իրականացումը.

3) կազմակերպում և ուսումնասիրում, հայտնաբերում է արգելոցի պատմամշակութային ժառանգության օբյեկտները և անձնագրավորում է դրանք.

4) կազմակերպում է մշտական ցուցադրություններ, ժամանակավոր և շրջիկ ցուցահանդեսներ.

5) դադարեցնում է արգելոցի տարածքում պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանվածությունը վտանգող աշխատանքները և տնտեսական գործունեությունը: Արգելոցի հուշարձանների և նրա պահպանական գոտու տարածքի պահպանության պայմանակարգի ու կանոնակարգի խախտման դեպքում կազմում է ակտեր, արձանագրություններ և ներկայացնում ՊՈԱԿ.

6) հայտնաբերում և հավաքում է թանգարանային առարկաներ ու հավաքածուներ.

7) հաշվառում է թանգարանային առարկաները և հավաքածուները, ստեղծում դրանց էլեկտրոնային տվյալների շտեմարան.

8) ՊՈԱԿ-ի գործադիր մարմնի քննարկմանն է ներկայացնում արգելոցի գործունեությանը վերաբերող հիմնախնդիրները:

10. Արգելոցի տարածքում էքսկուրսիաների, գիտալուսավորչական աշխատանքների կազմակերպման ու անցկացման բացառիկ իրավունքը պատկանում է արգելոցին: Այլ կազմակերպություններ արգելոցի տարածքում նշված գործունեությամբ կարող են զբաղվել ՊՈԱԿ-ի հետ կնքված համապատասխան պայմանագրի և թույլտվության առկայության դեպքում:

V. ԱՐԳԵԼՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

11. Արգելոցին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ՊՈԱԿ-ի կողմից հանձնված գույքի նկատմամբ արգելոցը չունի իրավունքներ:

12. Անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված գույքի պահպանման պարտականությունը կրում է արգելոցը:

VI. ԱՐԳԵԼՈՑԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

13. ՊՈԱԿ-ի գործադիր մարմնի հրամաններով արգելոցին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

14. ՊՈԱԿ-ն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից արգելոցին ամրացված գույքը:

15. Արգելոցն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց և անժամկետ օգտագործման:

VII. ԱՐԳԵԼՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

16. Արգելոցի ընդհանուր կառավարումն իրականացնում է ՊՈԱԿ-ի գործադիր մարմինը, իսկ ընթացիկ գործունեությունը ղեկավարում է ՊՈԱԿ-ի գործադիր մարմնի կողմից նշանակված մասնաճյուղի վարիչը:

17. ՊՈԱԿ-ի գործադիր մարմինը՝

1) ապահովում է արգելոցի բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է մասնաճյուղի վարիչին.

3) հաստատում է արգելոցի տարեկան ծախսերի նախահաշիվը, աշխատանքային գործունեության ծրագրերը.

4) իրականացնում է արգելոցի գործունեության նկատմամբ վերահսկողությունը.

5) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում մասնաճյուղի վարիչի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

6) լսում է արգելոցի գործունեության մասին հաշվետվությունները.

7) հաստատում է արգելոցին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված գույքի կազմը.

8) իրականացնում է վերահսկողություն արգելոցին հանձնված գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ:

18. Մասնաճյուղի վարիչին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է ՊՈԱԿ-ի տնօրենը: Մասնաճյուղի վարիչի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր: Աշխատանքային պայմանագրով սահմանվում են մասնաճյուղի վարիչի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները ՊՈԱԿ-ի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ օրենքով նախատեսված բոլոր հիմքերն ու այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերն անհրաժեշտ կգտնեն: Աշխատանքային պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

19. Մասնաճյուղի վարիչը սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորության սահմաններում ղեկավարում է արգելոցի գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

20. Մասնաճյուղի վարիչը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

21. Մասնաճյուղի վարիչը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորություն-ների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

22. Մասնաճյուղի վարիչը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս արգելոցի անունից, ներկայացնում նրա շահերը և համապատասխան լիազորությունների առկայության դեպքում կնքում է գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՊՈԱԿ-ի գործադիր մարմնի հրամաններով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է արգելոցին հանձնված գույքը.

3) ՊՈԱԿ-ի գործադիր մարմին է ներկայացնում միջնորդություն աշխատանքի նշա-նակման և աշխատողներին աշխատանքից ազատման, նրանց նկատմամբ խրախուսման միջոցների կիրառման ու կարգապահական տույժերի նշանակման վերաբերյալ.

4) ՊՈԱԿ-ի գործադիր մարմին է ներկայացնում առաջարկություն աշխատողների միջև աշխատանքի բաշխման վերաբերյալ.

5) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահման-ներում տալիս է հրահանգներ, պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

6) ՊՈԱԿ-ի կողմից տրված համապատասխան լիազորությունների առկայության դեպքում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող:

23. Մասնաճյուղի վարիչը պարտավոր է չկատարել ՊՈԱԿ-ի գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրություն-ները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

24. Մասնաճյուղի վարիչի բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է գիտական աշխատողը:

25. Արգելոցի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, աշխատանքային պայմանագրով, մասնաճյուղի ներքին կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

26. Արգելոցի գործունեությանը վերաբերող հիմնական հարցերի քննարկման և կազմակերպական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով մասնաճյուղի վարիչին կից ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ գիտամեթոդական խորհուրդ: Գիտամեթոդական խորհրդի կազմը և կանոնակարգը հաստատում է ՊՈԱԿ-ի գործադիր մարմինը:

VIII. ԱՐԳԵԼՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

27. Արգելոցի գործունեությունը կարող է դադարեցվել հիմնադիրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16_1204

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
նոյեմբերի 24-ի N 1204 - Ն որոշման

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

_____ ի՝ Հողհատկացման հիմքը_____

Ագարակ

Մասշտաբը 1:10000



Մակերեսը (մ.հա)	74.51հա			
Ծանապարհը				
Նպատակային նշանակությունը				
Գործառնական նշանակությունը				
Հողամասը ծանրաբեռնված է				



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ